

ժամանակները առանձին էին, իսկ երկրորդն ու երրորդը միասին:

Ուսուցչական խումբը, որի մեծամասնությունը կազմակերպված է տեղացիներից, ուսումնարանական գործի առաջադիմությունը շատ է նպաստում և խղճմամբ ու համերաշխությամբ կատարում է իր պաշտօնը:

Ուսումնարանի գործի առաջադիմությունը շատ է նպաստում հոգաբարձու Ստեփաննոս առաջ քանահայ Տէր-Ստեփաննոսից, որը, միևս հոգաբարձուների աջակցությամբ, այժմանից իսկ աշխատում է շատացնել ուսումնարանի ներթակայ միջոցները միևս տարի երկրամասն դարձնելու համար, որի համար հարկաւորում է առնուազն տարեկան 3,000 ռուբլ:

Ուսումնարանի աղբյուրները գոյանում են՝ ուսումնարանական շինությունն ունեւած վարձից, տարեկան 1,200 ռ., մոմականաւորութիւնից 1,065 ռ., եկեղեցիներից 200 ռ., կրպակներից 200 ռ. և ուսումնարանից, այնպէս որ ուսումնարանի տարեկան մուտքը հասնում է 2700 ռ., բացի սըրանից երեւնի լինում են և կողմնակի նուիրատուութիւններ մեղեկատէրերից:

Անցեալ տարի թիֆլիսում վաճառված գործից հարուստ Ալիսանեանի որդիք՝ Կոստանդին և Յովհաննէս, մեր դպրոցներին նուիրելին 1,000 ռ. Տէր-Ստեփան հայրը լաւ խմանաւոր ուսումնարանի շինութեան անյարմարութիւնը, որը չէր համապատասխանում ուսումնարանի առողջապահական կանոններին, յորդորեց Ալիսանեան եղբայրներին, փոխանակ այդ հազար ռուբլի, կառուցանել մի նոր երկարականի շինութիւն իրանց հօր յիշատակը անմահ պահելու համար: Ալիսանեան եղբայրները մեծ ուրախութեամբ յանձն առան այդ և արդէն սկսվեցաւ շինութիւնը, որը սեպտեմբերին պատրաստ կը լինի և որի յատակագիծը պատրաստեց պ. Սալամբէկեանը: Գովելի է պ. պ. Ալիսանեան Կոստանդին և Յովհաննէս եղբայրների արած նուիրատուութիւնը:

ՆՆՈՒՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսցիներին լաւ ծանօթ պ. Կ. Բէգիշէվ, որը երբեմն եղել է «Тифлисский Листок» լրագրի խմբագիր, և որը անցեալ տարի նշանաւոր է հանդիսացել Գիւղըրգարովի հիւրանոցում իր արած քաջագործութիւններով, այժմ «Новое Время» լրագրի 4409 համարում մի թղթակցութիւն է տպել, որի մէջ աշխատում է ապացուցանել թէ Բագուի տոնավաճառի թշնամիները հայերն են: Ահա պ. Բէգիշէվի դատողութիւնները. «Բագուի տոնավաճառը արդէն մտաւ իր գոյութեան երկրորդ տարեշրջանը: Անցեալ տարի այդ տոնավաճառը չարդարացրեց իր վրա դրած յոյսերը և նրա ամբողջ շրջագումարը 50,000-ից չանցաւ: Այս տարի աւելի շատ ապրանք բերվեցաւ և տոնավաճառում կարելի է տեսնել մինչև անգամ բուսարացիներին և աւգանցիներին: Բացի դրանից տոնավաճառին մասնակցեցին մի քանի ռուս նշանաւոր առևտրական տներ, այնպէս որ ընդհանրապէս Բագուի տոնավաճառի դրամական շրջանաւորութիւնը այս տարի մօտ 1 միլիոն ռուբլ:

Այդ ժամանակ գիւղացին գործում էր քրտինքը երեսին, գործում էր իր ամբողջ ոյժով, մի կողմից բերելով իրենց նալում էր իր առատ հունձ խոտացող արտերին, միևս կողմից վարում էր բամբակի արտերը և պատրաստում էր բամբակի սերմը հողի մէջ ձգելու: Նա այս բոլորը կատարում էր արագութեամբ, աշխատելով ցանքերը թր առաջ ընտելեան կամքին թողնելու: Եւ խեղճը երբ երկնայնաւ իր բոլոր գործերը վերջացրած, յորձան, վատասկած տուն է վերադառնում, նրա քանակից հասնում է թշնամին, սկսում է խիստ կարկուտ տեղալ, երկար ժամանակ յորդ անձրև թափվել, դիզված ձիւները հալվել, ահագին հեղեղներ գոյանալ, ամեն խոտոցներից սկսում են գետեր վազել, գետակները մեծանալ, այդ բոլորը գալով լցվում են Արաքսի մէջ, կատաղած Արաքսը տեղ տալ չէ կարողանում իր ափերի մէջ անհուն հեղեղների հոսանքին և փրփրահար գոռաւորով մղում է դէպի առաջ իր ամբողջ ոյժով, քանդում է, տանում կամուրջներ և ամեն պատահածը: Բայց կատաղած Արաքսը այսքանով չէ բաւականանում, գնալով Գուրը շատանում է, այլ ևս տեղ չը գտնելով դղրդկեմով պայթում է և ահագին թումբերը ողողելով ուժգին հոսանքով վազում է առաջ, իր տակը թողնելով Արարա-

լու կը հաննի Սկալով գործի համար այդ լաւ է: Այդ տոնավաճառը շատ հակառակորդներ ունի: Ի միջի այլոց հետաքրքիրն այն է, որ տոնավաճառի գլխաւոր հակառակորդները Բագուի տեղական հայ վաճառականներն են, որոնք անմիջական յարաբերութիւն ունեն ռուս և արուսաստանեան առևտրական տներին հետ, որտեղից նրանք բերել են տալիս ապրանքներ և ապա երկը անգամ աւելի թանկ են ծախում: Բագուում էլայերի կարծիքով, տոնավաճառը վնասում է դրանց առևտրին, և որպէս զի արդեն օտար վաճառականներին էժան ծախել իրանց բերած ապրանքները, հայերը սկսեցին դնել այդ ապրանքները հէնց շողենաւերից և վաղօրներից դատարկելու ժամանակ, չը թողնելով որ ապրանքները ծախվեն տոնավաճառում: Բացի դրանից, այդ հայերից շատերը, քաղաքային դուռայի ձայնաւորներ լինելով, ամեն կերպ աշխատում են արդեն տոնավաճառի համար մի օրինաւոր չի-նութիւն կառուցանել և այլն»:

Վերջին ժամանակներում հրատարակված տեղեկութիւններից, որոնք քաղված են ամերիկացի հիւպատոսների կողմած տեղեկագրերից, երևում է, որ ռուսաց կէրօսինը, բացի Հնդկաստանից, Եսպոնիայից և Չինաստանից, մուտք է դրածում և Ալբերիկայում: 1888 թիւ ընթացքում Հնդկաստան ծախվել է 10,000 արկղ ռուսական կէրօսին (արկղում 73 ֆունտ կէրօսին կայ, այսինքն մօտ 2 պոնդ): Ի նկատի ունենալով այդ պիսի աջողութիւնը, վարձված են արդէն անդլիական երեք մեծ շողենաւեր ռուսաց կէրօսինը Չինաստան և Եսպոնիա տեղափոխելու համար: Ներկայ տարվայ յունվարին Կոլումբիա և Յէյթօն ուղարկվեցաւ 30,000 արկղ մեր կէրօսինից, որը և ծախվեցաւ այնտեղ, սակայն այդ կէրօսինը մի փոքր էժան էր ծախվում ամերիկականից: Եւրօպայումն էլ ռուսաց կէրօսինը նոյնպէս աջողութեամբ մրցում է ամերիկական կէրօսինի հետ, այնպէս որ վերջինի արտահանութիւնը այս տարին անցեալ տարեանից շատ է պակասել:

ԱՅՈՒՐԱՎԱՐՈՒՄ մեր գրում են. «Մեր գիւղերում առաջ գրիթէ միշտ գործութիւններ էին սլատանում, իսկ այժմ դադարել են, և դրա պատճառն այն է, որ մեր նորեկ դաւաճապետ, պ. Գիւլաշի-Տարասովի կարգադրութեամբ ամեն գիւղի հասարակութիւնը համախօսական թերթ է կազմել, որով կամ ինքն պիտի գործեր յանձնէ և կամ գողացած ապրանքները տալ: Ահա այս կարգադրութիւնն է, որ մեր գիւղերային կիներին զրապել է իրանց գիւղերային արաւանքներից»:

ԿՈՅՈՒՐՈՒՄ մեր գրում են. «Մինչև յունիսի 13-ը անձրևային եղանակները և քամիները միանգամայն աշնանային եղանակի կերպարանք էին տրւել այս ամառանոցին, թէև գեղեցիկ կանաչը, գեղեցիկ անտառը, և կանաչադարձ գոյնգոյն ծաղիկները ամեն բույս վկայում էին, որ դարձան և ամառանաւոր ամենապայծառի միջոցն է: Համառոտաբար անցեալ տարիների հետ այս տարի եկողները դեռ քիչ են, ամառանոցների մի նշանաւոր մասը դեռ չեն վարձված, ինչպէս երևում է

տեան դաշտավայրի մի մասը: Խեղճ գիւղացին առաւօտը դարձնում է իր արտերը կարկուտից վնասված, հեղեղված և լճերով ծածկված է տեսնում: Ուրեմն, խեղճ գիւղացի, ինչ էր մնում քեզ անելու. փոխանակ անցեալ տարվայ պարտքերը թափելու, ստիպված էիր նորից բարձրված տոկոսներով բեռնաւորով, դարձեալ այն յոյսով, որ յետագայ տարին բոլոր պարտքերը միանգամայն կը վճարես, յոյս ունենալով, որ 88 թիւը մի բարեշուք տարեգում կը կազմէ: Բայց ուր, թէև 87—88 թիւ բամբակի սէզոնում կարողացար փոքր ի շատէ ունեցածը բամբակը աճող գնով վաճառել, բայց ստիպված էիր մինչև անգամ 50 ռուբլով ցորեն դնել, այնպէս որ քո ձեռքում բամբակի փողից ոչինչ էր մնում:

Եկաւ և 1888 գիւղացու երեսակցած բարեշուք թիւը, բերեց բազմաթիւ տարափոխիկ հիւանդութիւններ և կոտորած մասնակներին, խեղճ գիւղացին դեռ նոր իր սիրելի դաւանին հողին յանձնելով տուն է վերադառնում, երբ միևս դաւանքներին է վարակված զոտում տարափոխիկ հիւանդութիւններով: Ինչ կարող էր անել, ստիպված պիտի հնազանդէր դաւը ձակատագրին և մի մի իր դաւանքներին հողին յանձնել և ահա

այս տարի յունիսի 20-ից կը սկսեն դալ Բնակարանների գները այնու ամենայնիւ շատ թանկ են և շատ շատերը եկած լինելով բնակարան վարձելու թանգութեան պատճառով թողնում և յետ են գնում: Եկողների քչութեան պատճառով ամառանոցում անտանելի տաքութիւն է տիրում. փոքրաթիւ հասարակութիւնը անձուկ կերպով սպասում է թէ երբ թիֆլիսից կը գան կառքերը, և թէ ինչ նոր մարդ, և նոր համբաւ կը բերեն: Գունիսի 15-ից եղանակների բացվելու պատճառով՝ եկողները շատանում են: Այս օրերս պէտք է տեղափոխվեն այստեղ՝ շտաբը, օրիորդական ինստիտուտի և ս. Նունէի դպրոցի աշակերտահմիները: Մի քանի ժամանակից յետոյ այստեղ պէտք է գայ կառավարչապետ իշխան Գոնդուկով-Կորսակով: Արդէն այստեղ բժշկվելու է եկել թիֆլիսի նահանգապետ Ջիսերման: Ամառանոցի բնակիչները անհամբեր սպասում էին նորնորի աւանապետ (ПОСАДСКОЙ ГОЛОВА) երիտասարդ խալաթովին, ըստ որում շուկայում ամեն տեսակ գեղձուկներ գործում են մանրակաւաճառները, և առհասարակ ամառանոցում շատ լաւ կայ շինելու և նորոգելու: Մի քանի օր է միայն որ խալաթով եկել է. թէ որքան արդիւնաւէտ կը լինի նրա գործունէութիւնը մեր ամառանոցի համար, այդ ցոյց կը տալ մօտիկ ապագան. առ այժմ նա ոչինչ դեռ չէ արել»:

Այս տարի թիֆլիսի երկրորդ գիմնազիայում աւարտեցին իրանց դասընթացը, ստանալով հասունութեան վկայական 14 հոգի, որոնցից 6 հայ են, 5 ռուս, 2 վրացի և մէկ հրէայ: Երկու հոգի ստացել են ոսկէ մեդալ, որոնցից մէկը Միցուզով հայ է. մէկ աշակերտն էլ ստացել է արծաթէ մեդալ:

Այս տարի Մեծ Խախտուհի Օլգա Ֆեօդորովնայի անունան թիֆլիսի իգական գիմնազիայի VII դասարանից աւարտեցին իրանց դասընթացը 48 աշակերտահմիներ. դրանցից 21 ռուս են, 17 հայ, 3 վրացի, 3 լէհացի, 3 գերմանացի և 1 հրէայ: Աշակերտահմիներից 3 ստացել են ոսկէ մեդալ և 2 արծաթէ: Նոյն գիմնազիայի VIII լրացուցիչ դասարանից վկայականներ են ստացել 47 աշակերտահմիներ, որոնցից 23 ռուս, 15 հայ, 2 վրացի, 4 գերմանացի, 3 լէհացի:

Կովկասեան ճանապարհների հաղորդակցութեան վարչութիւնը հաղորդում է, որ ներկայ յունիս ամսվայ միջոցում եկած անձրևների պատճառով Աղստաֆայից դէպի Երևան և Ալեքսանդրապոլ տանող փոստի ճանապարհը փչացել է, մասնաւոր թարաշայ, Դիլիջան և Ղարաբախ կաւարանների մէջ եղած տարածութեան վրա Այդ տեղերում քանդված են շատ խողովակներ և խճուղին այնպէս քարոքանդ է արված, որ կառքերի երթևեկութիւնը դադարած է: Իսկ հաղորդակցութիւնը շարունակվում է միայն ձիււորների և գոմէշ արաւանների միջոցով:

«КАВКАЗ» լրագրին հաղորդում են, թէ այս օրերս Կովկասեան բժշկական վարչութիւնը տեղեկութիւն է ստացել, որ ներքին գործերի միւնիստրը գրագրութիւն է սկսել Ֆինանսների մի-

այսպէս շատ գիւղացիներ մի քանի օրում գրկվում էին իրանց մի քանի սիրելի դաւանքներից: Այսպիսի թշուառութիւնների մէջ անցնում են նրա օրերը. գալիս է գարունը, գիւղացին հաղիւ իր արտաւորը սրբելով դուռն է գալիս դաշտը իր ցանքը բաժանելու. ընտելեան հետ, դաւանադին սրտով վերցնում է արօրը, եղները քրտն է դէպի դաշտը, վարում է արտերը, ցանքերն է ցանում, բայց ոչ ուրախ երգելով և հրճանքով, այլ նա այդ բոլորը կատարում է տխուր, տրտուտ, եղները անգամ կարծես վշտակից են նրան, տիրոջ արօրը դանդաղ առաջ քաշելով: Մօտենում է մայիս ամիսը, նրա արտերը առատ հունձ են խոտանում, հազիւ հազ գիւղացու երեսին ժըւպի է փոխվում: Եկաւ մայիսը, սա էլ բերեց վիշտ և աւերմունք. ամբողջ ամիսը անձրև տեղաց, հեղեղներ գոյացան, դարձեալ մեծ տարածութիւն համարեան ամեն տեղ տեղաց կարկուտ չը տեսնված մեծութեամբ. ահա մի հարուած, մի թշուառութիւն, որը գիւղացուն բոլորովին յուսահատութեան մէջ ձգեց, բամբակի, ցորենի արտերը, այգիները բոլորը ոչնչացրեց, ամալի գետին դարձ-

նիստրի հետ թիֆլիսում խեղադարձների համար առանձին ապաստարան կառուցանելու նպատակով:

«НОВОСТИ» լրագրին հաւաստի աղբյուրներից հաղորդում են, որ անդրկովկասեան երկաթուղու ընկերութեան ակցիոներները, որոնց գլխաւորներն են պ. պ. Պալաչուկովի և Բունդէ, համաձայնութիւն են կայացրել Ֆինանսների մինիստրութեան հետ, որով վերոյիշեալ երկաթուղին 1889 թիւ յունվարի 1-ից դառնալու է կառավարութեան սեփականութիւն և կենթարկվի պետական երկաթուղիների ժամանակաւոր վարչութեանը:

Նիստրի Բաշինջաղեան ահա երկու շաբաթ է, որ բացել է ԲԱԳՈՒՄ իր պատկերների ցուցահանդէսը: Կովկասի մէջ, որքան յայտնի է, մեր նկարիչը առաջինն է, որ իր պատկերները հանդէս է հանում. սակայն Բագուի պէս քաղաքում նա ունեցաւ այս երկրորդ անգամ լաւ աջողութիւն: Միջին թւով օրական յաճախողների թիւը 40—45 էր. մուտքը լի օրերին նշանակված էր 30 կ., իսկ կիրակի օրերը 20 կօպէկ: Գայտնի պատկերներից «Հայերի դաղթումը» գնեց պ. Մատուրեանց, «Աւարաւոր» պ. Թ. Ամիրեանց, և «Սևան» պ. Ա. Ղաւմանց: Այսօր 12-ին յունիսի ցուցահանդէսը փակելով, պ. Բաշինջաղեան մտադր է նոյն նըպատակով դնալ և միևս դաւաճական քաղաքները, ինչպէս Երևան, Երզնի, Գանձակ, Երևան և այլն:

Ձարմանալի կերպով ԲԱԳՈՒՄ երկաթի գործարաններում գործերը քչացել են. այսպէս լնաց իր անալին գործարանը ստիպված փակել է արդէն: Իսկ Երզնիցաների գործարանում շուտով բոլոր գործերը կը վերջանան և կապալաւոր Գուստաւ Լիստը ստիպված կը լինի մօտ 50 մարդ դուրս բերել: Յաւալի կը լինի այն բաղնիքի հայ ընտանիքների դրոպիւնը, որոնց որդիները գործում էին այնտեղ: Փակված է նոյնպէս Կ. Մարտիրոսեանի փոքրիկ գործարանը:

Այս տարի ԲԱԳՈՒՄ Մարիամեան իգական գիմնազիայում ոսկէ մեդալով աւարտեց հայ օրիորդ Մարգարեանց, զուբեյի Նոյն դպրոցի մի գերմանացի օրիորդ ռուսանողհի, չը կարողանաւով դասատուը փոխել, ինքնապաշտելով գործեց:

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեր գրում են. «Այս տարի Լաւարեան ճեմարանում ընտելութիւնները վերջացել են յունիսի 5-ին. VIII-որդ դասարանի վեց աւարտող աշակերտներից երեքը հայ են և երեքը ռուս. ահա հայ աշակերտների ազգանունները. Նիկողայոս Բերբերեանց—Տոր-Նախիջևանցի, Լեւոն Մարգարեանց, Էդրեմեանց: Սրանցից երկրորդը՝ պ. Կաստանայեանց Լաւար. ճեմարան միտնելու օրից մինչև ուսման ընթացքի աւարտելը, նախակրթարանից մինչև VIII-որդ դասարանը իւրաքանչիւր տարի առաջին առաջադէմ աշակերտներից միւն է եղել: Ի նկատի ունենալով նրա ազնիւ եռանդը, ջանասիրութիւնը և գեղե-

րեց. ամեն օր ամեն տեղից նոր նոր անմխիթար լուրեր են գալիս. մի տեղ հեղեղ, միևս տեղ կարկուտ, մի այլ տեղ կայծակի հարուածներ, ահա այս բոլորը ձեռք ձեռքի տուած, միացած ոյժերով սպառնում են մահ և սով խեղճ փողովրդին:

Խեղճ գիւղացի, դեռ սա բոլորը չէ. ասինք թէ միանգամայն ձեռքերի սրբեցիլ ցանքերիցը և մի կողմ քաշվեցիլ, բայց ինչպէս պէտք վարվես վախաւորի հետ. նա ուշ թէ շուտ յայտնվելու է, նրա դաւանաժպիտ դէմքը պիտի յայտնվի քո չէմքի վրա, նրա թունաւոր լեզուն պիտի խոցուտէ քեզ, դատարան, բանտ ապաւնալով պիտի պահանջէ մի քանի անգամ տոկոսով բարձրված պարտքը, քո թախանձանքները ոչինչ են և զուր նրա քարացած սիրտը մեղմացնելու. ահա յարմար ժամանակ, որ նա ոյժով կը խլէ քեզանից միակ բանող եղները, քո ընտանիքի միակ ապրուստի կովը և քեզ երեսիդ վրա ընկած թողնելով կը հեռանայ, ահա մի նոր անարդարութիւն և մի նոր վիշտ, որոնց դիմադրել այլ ևս անկարող կը լինես:

